
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Իրավունքը՝ որպես սոցիալական համակարգի մաս, արտացոլում է հասարակական արժեքները և կարգավորում է մարդկանց փոխհարաբերությունները: Իրավունքը կենդանի օրգանիզմ է¹: Այն հիմնված է փաստական և սոցիալական իրականության վրա, որն անընդմեջ փոփոխվում է²: Երբեմն այդ փոփոխություններն արմատական են և անգեմ աչքով տեսանելի, իսկ որոշ դեպքերում աննշմարելի են և իրականացվում են աստիճանաբար:

Հասարակական կյանքում տեղի ունեցող հիմնարար փոփոխությունները տեսանելի են, եթե վերաբերում են սոցիալական արժեքներին, քանի որ սոցիալական համակարգի հիմնարար արժեքները կարևոր նշանակություն ունեն այդ համակարգի գործառնության համար: Հայտնի է, որ սոցիալական արժեքները ձևավորվում են որոշակի ժամանակահատվածում և սոցիալական միջավայրում տվյալ ժամանակի պատմական առանձնահատկությունների հիման վրա: Սոցիալական արժեքները նույնպես ենթարկվում են դիալեկտիկայի կանոններին և հասարակության զարգացմանը: Պատմական պայմանների փոփոխմանը զուգահեռ այդ արժեքները փոփոխվում են. այն, ինչ կարևոր է որոշակի պատմական ժամանակահատվածում, այլ ժամանակի և տարածության մեջ կարող է կորցնել իր նշանակությունը և արժեքը:

Սոցիալական արժեքների գնահատումը հատկապես արդիական է դառնում հասարակության կյանքի ճգնաժամային պայմաններում, երբ ձևավորվում են արմատապես նոր արժեքային կողմնորոշումներ: Օրինակ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո անկախություն ձեռք բերած հետխորհրդային պետությունները, ամբողջովին մերժելով նախկին արժեքային համակարգը, ժամանակավորապես կորցրեցին արժեքային կողմնորոշումները և հայտնվեցին գաղափարախոսական դատարկության մեջ:

Իրավունքի կապը փոփոխվող իրականության հետ ենթադրում է, որ այն նույնպես մշտապես փոփոխվում է: Երբեմն իրավունքում տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են հասարակական փոփոխությունների և նույնիսկ կոչված են խթանելու դրանք: Իրավունքում տեղի ունեցող փոփոխությունները առավել հաճախ պայմանավորված են հասարակական կյանքի փոփոխություններով: Հասարակական փոփոխությունները կյանքի իրավունքն են³, ուստի սոցիալական փոփոխությանը պատասխանելը իրավունքի կյանքն է:

¹ Տե՛ս **Brian Dickson**. A Life in the Law: The Process of Judging, 63 Sask. L. Rev. (2000), էջ 373, 388:

² Տե՛ս **Benjamin N. Cardozo**. The Paradoxes of Legal Science 10–11 (Greenwood Press 1970) (1928), էջ 181:

³ Տե՛ս **William H. Rehnquist**. The Changing Role of the Supreme Court, 14 Fla. St. U. L. Rev., 1, էջ 245:

Հասարակական կյանքի և սոցիալական արժեքների փոփոխության պայմաններում պետական իշխանության մարմինները պարտավոր են իշխանության տարանջատման սկզբունքի շրջանակում իրավական կարգավորումը համահունչ դարձնել հասարակական նոր պայմաններին: Հակառակ պարագայում իրավունքի և կյանքի միջև կառաջանա որոշակի անջրպետ, կխաթարվի իրավունքի գործողության արդյունավետությունը: Գ. Հարությունյանը այս կապակցությամբ նշում է, որ անցումային պետությունների համար հիմնական դեֆորմացիան դրսևորվում է իրավաստեղծ գործունեության ոլորտում, երբ, մոռանալով հիմնարար սահմանադրական արժեքները, իրավական կարգավորումն առավել շատ ելնում է նպատակահարմարությունից⁴:

Փոփոխվող հասարակությունում իրավունքի և կյանքի միջև ձևավորված անջրպետի հաղթահարման, նոր պայմաններին իրավունքի հարմարեցման, առկա սոցիալական արժեքների վերհանման և արդիականացման, մրցող սոցիալական արժեքների հավասարակշռման ոլորտում որոշակի դերակատարություն ունի նաև դատական իշխանությունը, որտեղ առավել ցայտուն է դրսևորվում դատական մարմինների գործառույթների հասարակական-քաղաքական բնույթը:

Սույն հոդվածում կքննարկենք փոփոխվող հասարակությունում իրավունքի հարմարեցման և սոցիալական արժեքների վերահիմաստավորման կամ սոցիալական նոր արժեքների ներմուծման ու արդիականացման ոլորտում դատական գործառույթյան հիմնախնդիրները:

Հասարակական փոփոխություններով պայմանավորված՝ իրավական փոփոխությունները հաճախ նպատակային են և պատճառաբանված: Իրավական նորմերը ընդհանուր առմամբ բավարար չափով ճկուն են և կարող են առանց փոփոխության արտացոլել իրականությունում տեղի ունեցող տեղաշարժերը: Այնուամենայնիվ, հանդիպում են դեպքեր, երբ իրավական նորմը չի կարող հարմարեցվել նոր փոփոխություններին: Այս դեպքում իրավունքի և հասարակության միջև ձևավորվում է անջրպետ, և առաջանում է նոր իրավական նորմ ընդունելու անհրաժեշտություն: Օրինակ՝ կառքերի տերերի կողմից հետիոտների նկատմամբ զգուշություն ցուցաբերելու պարտականության վերաբերյալ իրավական նորմը բավարար էր լուծելու ինքնազնացների տերերի կողմից հետիոտների նկատմամբ զգուշություն ցուցաբերելու խնդիրը: Սակայն, այդ նույն նորմը բավարար չէր լուծելու ինդուստրացման, ուրբանիզացման և փողոցներում երթևեկող հազարավոր ավտոմեքենաների հետ կապված խնդիրները, որի պայմաններում մեղքի հիմնավորումը դառնում էր ավելի ու ավելի բարդ: Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում իրավունքը փոխել և անզգուշության վրա հիմնված պատասխանատվությունից անցնել առանց մեղքի պատասխանատվության: Եթե հասարակական կյանքում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, ապա հին նորմերը չեն կարող կիրառվել: Անզգուշությամբ կատարված իրավախախտումների վերաբերյալ նորմերը, որոնք կարող են վերաբերել սովորական ռիսկերին, ամենայն հավանականությամբ չեն կարող կիրառելի լինել ատոմային ռիսկերի դեպքում:

⁴ Ст'ю Арутюнян Г. Гарантии реализации основополагающих конституционных ценностей на уровне государственной политики и в общественной практике. XIII Ереванская международная конференция "Фундаментальные конституционные ценности и общественная практика". Ер., 2008. էջ 27-37:

Այս կապակցությամբ Ա. Բարակը, շարունակելով Օ. Հոլմսի հայտնի արտահայտությունը, որ իրավունքի կյանքը տրամաբանությունը չէ, այլ փորձը⁵, նշում է, որ իրավունքի կյանքը տրամաբանության և փորձի վրա հիմնված իրավունքի զարգացումն է, որի պայմաններում իրավունքը հարմարեցվում է սոցիալական նոր իրողություններին: Իրավունքի պատմությունը միևնույն ժամանակ կյանքի փոփոխվող պահանջներին իրավունքի հարմարեցման պատմություն է: Իրավունքը միայն տրամաբանությունը չէ. այն ավելին է, քան փորձը: Այն տրամաբանությունն է և փորձը միասին⁶:

Փոփոխվող հասարակությունում իրավունքի հարմարեցումը կարող է իրականացվել երկու եղանակով. մի դեպքում հասարակական փոփոխություններն իրավունքում արտացոլվում են օրենսդիր մարմնի կողմից օրենսդրական փոփոխություններ կատարելու եղանակով, մեկ այլ դեպքում իրավունքը առանց օրենսդիր մարմնի միջամտության կարող է հարմարեցվել հասարակական փոփոխություններին օրենքը նորովի մեկնաբանելու միջոցով:

Օրենսդիր իշխանությունը իրավունքում գիտակցված փոփոխություններ իրականացնելու գլխավոր դերակատարություն ունի: Նա իրավասու է փոխելու իր իսկ ընդունած օրենքները, ստեղծելու նոր իրավական գործիքներ, որոնք սահմանում են նոր սոցիալական իրողություններ և նույնիսկ որոշում են դրանց բնույթն ու առանձնահատկությունները:

Միևնույն ժամանակ հարց է ծագում՝ արդյոք դատավորին վերապահված է օրենսդրության ոլորտում հասարակության և իրավունքի միջև անջրպետը վերացնելու պարտականություն, և արդյոք դատավորը կարող է արձագանքել այդ բացերին միայն այն պատճառով, որ ինքը օրենսդրությունը մեկնաբանողն է:

Արտասահմանյան իրավագիտական գրականության մեջ նշվում է, որ այս հարցի պատասխանը կախված է այն բանից, թե օրենսդիր և դատական մարմինների գործընկերության որ մոդելը պետք է հիմք ընդունել՝ սահմանափակ գործընկերությամբ, թե՞ գործակալության (agency): Ռ. Պոզները նշում է, որ գործակալության մոդելի դեպքում դատավորը օրենսդիր մարմնի գործակալն է: Նա՝ որպես կրտսեր գործընկեր, պետք է գործի իր ղեկավարի ցուցումներին համապատասխան, սահմանափակված է իր ավագ գործընկերոջ կարգադրագրերով⁷: Ա. Բարակն արդարացիորեն քննադատում է Ռ. Պոզների առաջարկած գործընկերության գործակալական մոդելը՝ պատճառաբանելով, որ դատավորը պարզապես գործակալ չէ, որը պետք է կարգադրագրեր կատարի, իսկ օրենսդիրը ղեկավար չէ, որ իր գործակալին հանձնարարություններ տա: Երկուսն էլ պետական իշխանության ինքնուրույն թևեր են, որոնք ունեն տարբեր դերակատարություն. մեկը օրենսդիր մարմին է, մյուսը՝ մեկնաբանող⁸: Այս առումով ընդունելի է օրենսդիր և դատական մարմինների միջև սահմանափակ գործընկերության մոդելը, որի պայմաններում փոփոխվող հասարա-

⁵ Տե՛ս **Oliver Wendell Holmes**. The Common Law 1 (1881): “The life of law has not been logic: it has been experience.”, էջ 78:

⁶ Տե՛ս **Barak Aharon**. The judge in a democracy. In the United Kingdom: Princeton University Press, 2008, էջ 4:

⁷ Տե՛ս **Richard A. Posner**. The Problems of Jurisprudence. Harvard University Press Cambridge, Massachusetts London, England, Fourth Printing, 1994, էջ 269:

⁸ Տե՛ս **Barak Aharon**, նշվ. աշխ., էջ 16:

կությունում իրավունքի հարմարեցման հիմնական պատասխանատուն օրենսդիր մարմինն է, իսկ դատավորը իրավասու է մեկնաբանման միջոցով օրենքը հարմարեցնել նոր պայմաններին: Օրենսդիր իշխանության ընտրովի բնույթի, նրա կողմից կիրառվող գործիքների առկայության, տարբեր քաղաքականությունների և այլընտրանքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ուղիների առկայության պայմաններում օրենսդիր մարմինը փոփոխվող հասարակությունում սոցիալական միջավայրի և իրավունքի միջև անջրպետը վերացնելու գլխավոր պատասխանատուն է: Այս գործընթացում դատարանի դերը երկրորդական է:

Իրավունքի և հասարակության միջև առկա անջրպետը վերացնելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև դատական գործունեության ինստիտուցիոնալ սահմանները: Դատարանը չի կարող պլանավորել իրավունքի և հասարակության միջև առկա անջրպետը վերացնելու ռազմավարություն, քանի որ դատական միջամտություն պահանջող վեճերը ընտրում են ոչ թե դատարանը, այլ իրավունքի մյուս սուբյեկտները, որոնք էլ որոշում են, թե որ վեճը պետք ներկայացվի դատարանի քննարկմանը: Կարող են անցնել տարիներ, մինչև որ խնդիրը վերաճի հանրային հարցի և դառնա դատական քննարկման առարկա: Դատական իրավաստեղծ գործունեությունը ածանցյալ է վեճը լուծելու գործընթացից, ուստի առանց դատական վեճի չկա դատական իրավաստեղծ գործունեություն: Դատարանը այս առումով նպաստում է իրավունքի զարգացմանը ժամանակ առ ժամանակ, բայց ոչ պարբերաբար:

Իրավունքը փոխելու դատարանի ցանկությունը պետք է ընկած լինի իրավական քաղաքականության հիմքում: Օրինակ՝ դատարանը ընդհանուր առմամբ իրավասու է քննարկելու մարդու իրավունքների պաշտպանության հիմքում ընկած իրավական քաղաքականությունը: Բնականաբար, դատարանն ավելի քիչ դժվարություն ունի գնահատելու տրամաբանությունից, արդարադատության էությունից և գործող իրավունքից բխող իրավական քաղաքականությունը: Մինչդեռ տնտեսական կամ սոցիալական քաղաքականության բարդ, բազմակենտրոն հարցերը գնահատելիս դատարանը պետք է զգուշություն ցուցաբերի, քանի որ դրանք պահանջում են հատուկ գիտելիքներ և հմտություններ: Այս առումով որևէ մեկը չի կարող հաղթահարել իրավունքի և հասարակության միջև առկա անջրպետը՝ չունենալով այդ ոլորտի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն: Դատարանը ոչ միշտ է բավարար չափով տիրապետում հասարակական փաստերի վերաբերյալ տեղեկատվության, որով կհիմնավորվեն իրավունքում կատարվող փոփոխությունները: Ապացուցողական իրավունքը սովորաբար հետադարձ հայացքով է պատասխանում այն հարցին (այն էլ մասնակիորեն), թե ինչ է պատահել⁹: Ապացուցման գործընթացը չի վերաբերում ապագային և չի պատասխանում այն հարցին, թե ինչ է տեղի ունենալու: Ուստի, դատարանի տնօրինման ոլորտը սահմանափակ է: Այսպիսով, դատարանի կողմից իրավունքում կատարվող փոփոխությունները սահմանափակ են, հատվածային և ռեակտիվ:

Այնուամենայնիվ, դատարանը կարող է օրենքին տալ նոր իմաստ, դիմամիկ նշանակություն՝ փորձելով առանց օրենքը փոխելու հաղթահարել

⁹ Տե՛ս **Antonio Lamer**, Canada's Legal Revolution: Judging in the Age of the Charter of Rights, 28 *Isr. L. Rev.* 579 (1994), էջ 175:

իրավունքի և փոփոխված կյանքի միջև առկա հակասությունը: Օրենքը մնում է այնպիսին, ինչպիսին ընդունվելու պահին էր, սակայն դատական մեկնաբանման միջոցով նրա իմաստը փոխվում է, քանի որ դատարանը օրենքին տալիս է հասարակական նոր իրողություններին համապատասխանող հնչեղություն: Իրավակիրառ պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ իրավունքի իմաստը փոխվում է առանց օրենսդրության մեջ փոփոխություն կատարելու: Նման փոփոխությունները հնարավոր են դառնում դատական մեկնաբանության միջոցով, երբ դատարանը գիտակցում է հին օրենքի և սոցիալական նոր պայմանների միջև ձևավորված անջրպետը վերացնելու սեփական դերակատարությունը: Դատավորը չպետք է կարծի, թե իրավունքի հարմարեցումը նոր պայմաններին դուրս է իր իրավասությունից, որ դա բացառապես օրենսդրի գործունեության ուղորտն է: Հին օրենքը սոցիալական արդիականացված պահանջներին համապատասխանեցնելը դատավորի գործառույթն է:

Դատարանը նշված գործառույթն առավելապես իրականացնում է նպատակային մեկնաբանման համակարգի միջոցով, որը հիմնված է օրենքի դինամիկ մեկնաբանության վրա¹⁰: Գ. Ռադբրուչն արդարացիորեն նշում է, որ օրենքը կենդանի էակ է և նրա մեկնաբանությունը պետք է լինի դինամիկ: Այն պետք է ընկալվի այնպես, որ ինտեգրվի և մոտենա ժամանակակից պայմաններին¹¹: Բանն այն է, որ օրենքում անրագրված հասկացությունների իմաստները քարացած չեն: Օրենքը սոցիալական միջավայրի մաս է, իսկ այդ միջավայրը փոփոխական է: Օրենքի շարադրանքը մնում է նույնը, սակայն նրա նշանակությունը կյանքի պայմանների փոփոխության հետ միասին փոխվում է: Նման դեպքերում ակնհայտ երևում է, թե ինչպես է հին օրենքը իրավաբանական ուժը պահպանում ժամանակակից սոցիալական պայմաններում: Այս իմաստով օրենքի մեկնաբանությունը վերականգնող գործընթաց է: Օրենքի նախկին շարադրանքը, մեկնաբանման միջոցով լրացվում է նոր բովանդակությամբ՝ հարթելով կյանքի և օրենքի միջև առկա բացը:

ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանման միջոցով հաճախ է հին օրենքը հարմարեցնում նոր պայմաններին: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Կոտայքի մարզային կենտրոնի հայցն ընդդեմ Սեդա Ադամյանի՝ վարչական տուգանքը բռնագանձելու պահանջով քաղաքացիական գործով մեկնաբանել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ընդունված և առայսօր գործող «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքում օգտագործվող «պաշտոնատար անձ» հասկացությունը և փորձել է այն հարմարեցնել նոր իրողությանը: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշված գործով քննարկել է այն իրավական հարցը, թե անհատ ձեռնարկատերը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 42 հոդվածի իմաստով

¹⁰ Այս մասին մանրամասն տե՛ս **Barak Aharon**. Purposive interpretation in law. Published by Princeton University Press, 2005, էջ 414, **Черданцев А. Ф.** Толкование права и договора. М., 2003, էջ 70-83, 381, **Смирнов А. В., Манукян А. Г.** Толкование норм права. М., 2008, էջ 144:

¹¹ Տե՛ս **Gustav Radbruch**. Legal Philosophy, in *The Legal Philosophies of Lask, Radbruch, and Dabin 141* (20th Century Legal Philosophy Series, Vol. IV, Kurt Wilk trans, 1950, էջ 302:

պետք է որակվի որպես պաշտոնատար, թե՞ ֆիզիկական անձ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բացակայում է «պաշտոնատար անձ» հասկացության սահմանումն այդ օրենսգրքի իմաստով: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում «պաշտոնատար անձ» հասկացության մեկնաբանության համար հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ օրենսգրքն ընդունվել է դեռևս 1986 թվականին՝ խորհրդային ժամանակաշրջանում, երբ «պաշտոնատար անձ» ասելով հասկացվում էր միայն պետական իշխանական լիազորություններով օժտված անձը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանը յուրաքանչյուր դեպքում պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու մասին որոշման իրավաչափությունը ստուգելիս պետք է հաշվի առնի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 14 հոդվածի պահանջները, որում ամրագրված «պաշտոնական պարտականություն» հասկացությունը ՀՀ գործող օրենսդրության շրջանակում պետք է մեկնաբանել որպես կազմակերպչական ու կառավարչական (ղեկավար) գործառույթներ: Նշված մեկնաբանության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ թեև անհատ ձեռնարկատերերը ձևականորեն որևէ պաշտոն չեն զբաղեցնում, սակայն իրենց գործունեությունն իրականացնելիս ապահովում են դրա կազմակերպումն ու կառավարումն այնպես, ինչպես դա կիրականացներ նման գործունեությամբ զբաղվող որևէ կազմակերպության իրավասու ղեկավարը՝ պաշտոնատար անձը: «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքը պահանջում է անհատ ձեռնարկատիրոջ գործունեության նկատմամբ կիրառել այդ նույն կանոնները, հետևաբար նաև նույն տրամաբանությունը, որը կիրառվում է իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ:

Ա. Բարակը նշում է, որ ոչ միշտ է հնարավոր հին օրենքին նոր և արդիական իմաստ տալու եղանակով հաղթահարել իրավունքի և սոցիալական միջավայրի միջև ձևավորված բացը: Երբեմն դատավորն օժտված չէ օրենքի հին նշանակությունը վերահիմաստավորելու և կյանքի նոր պայմանների միջև առկա բացը վերացնելու իրավասությամբ: Նման դեպքերում դատավորը պետք է մի կողմ դնի իր աշխատանքային գործիքները: Դատավորը չի կարող գործել օրենքին հակառակ: Այս դեպքում դատավորը կարող է միայն հուսալ, որ օրենսդիրը կկատարի իր պարտականությունը և կվերացնի հին օրենքը¹²: Գ. Գալաբրեսը կարծում է, որ նման դեպքերում դատավորը պետք է իրավունք ունենա վերացնելու հնացած օրենքները¹³: Կարծում ենք, որ եթե հին օրենքի հարմարեցումը սոցիալական նոր միջավայրին հնարավոր է դատական մեկնաբանման միջոցով, ապա դրա համար անհրաժեշտ չէ օրենսդրորեն հատուկ ամրագրել օրենքը մեկնաբանելու դատարանի իրավասությունը: Բանն այն է, որ դատական մեկնաբանությունը արդարադատության իրականացման գործընթացի անբաժանելի մասն է, և դրա համար որևէ լրացուցիչ իրավական հիմք անհրաժեշտ չէ: Իրավիճակն այլ է, երբ հին օրենքը իր ողջ հայեցակարգով այնպիսին է, որ նույնիսկ առանձին հասկացություններ մեկնաբանելու միջո-

¹² Տե՛ս **Barak Aharon**, *Նշվ. աշխ.*, էջ 16:

¹³ Տե՛ս **Guido Calabresi**. *A Common Law for the Age of Statutes* (1982). **Barak Aharon**, *Նշվ. աշխ.*, էջ 16:

ցով այն չի կարող հարմարեցվել նոր համակարգին: Պատահական չէ, որ հայեցակարգային առումով հնացած օրենքների մի շարք դրույթներ պարզապես մահացած են և չեն կարող դատարանի կողմից կիրառվել:

Երբ համալիր և անհետաձգելի փոփոխություններ կատարելու համար մի ամբողջ օրենսդրության ճյուղ ստեղծելու անհրաժեշտություն է առաջանում, ապա օրենսդիրը պարտավոր է ընդունել նոր օրենքներ: Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում նախատեսված են մի շարք զանցանքներ, որոնք ենթակա չեն կիրառման, քանի որ հին օրենքով որպես այդ արարքները կատարած անձանց պատասխանատվության ենթարկող սուբյեկտներ նշված են այնպիսի մարմիններ, որոնք գործել են խորհրդային ժամանակաշրջանում, սակայն ներկայումս լուծարվել են: Օրինակ՝ նշված օրենսգրքի 219 հոդվածը սահմանում է, որ պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեներին առընթեր վարչական հանձնաժողովները քննում են սույն օրենսգրքի 55 հոդվածով (խախտումներ, որոնք օգտակար հանածոների հանքավայրերի մշակման պրոցեսում չեն կատարվել), 95 հոդվածով, 107 հոդվածով, 110-1102 հոդվածներով, 113 հոդվածով, 117 հոդվածի առաջին, երրորդ և չորրորդ մասերով (քաղաքացիական ավիացիայի նախարարությանը չենթարկվող օդանավակայաններում կամ այդպիսի օդանավակայանների շրջանում կատարված խախտումների համար), 134 և 134.1 հոդվածներով, 135 հոդվածով (ավտոմոբիլային տրանսպորտում խախտումներ կատարելու համար), 141-144, 146, 149-151, 153-156, 160, 171, 173, 176 հոդվածներով, 177, 178 հոդվածներով (բացի անչափահասների ծնողների կամ նրանց փոխարինող անձանց վերաբերյալ գործերից) և 179.1, 181, 183, 184, 186, 190-193, 195-197, 199, 204, 205, 205.1, 205.2, 205.3, 206, 208-212 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Պատգամավորների ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներին առընթեր վարչական հանձնաժողովները քննում են սույն օրենսգրքի 95 հոդվածով, 101 հոդվածով (երբ իրավախախտումը կատարվել է քաղաքացու կողմից), 107, 110, 113, 134 և 134.1 հոդվածներով, 135 հոդվածով (ավտոմոբիլային տրանսպորտում խախտումներ կատարելու համար), 141, 142, 146, 149, 150, 153-156, 162.1, 171, 173, 175 հոդվածներով, 177, 178 հոդվածներով (բացի անչափահասների ծնողների և նրանց փոխարինող անձանց վերաբերյալ գործերից) և 183, 184, 186, 190-193, 204, 205 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Հասկանալի է, որ նման հանձնաժողովները ներկայումս չեն գործում, ուստի վերը նշված բոլոր զանցակազմերը չեն կարող կիրառվել: Նման դեպքերում դատարանը չի կարող դատական մեկնաբանության միջոցով լրացնել կյանքի և օրենքի միջև ձևավորված բացը: Նշված գործառույթը վերապահված է Ազգային ժողովին:

Երբեմն սոցիալական փոփոխությունները ստեղծում են այնպիսի իրավիճակ, որ օրենքն ընդունվում է կոնկրետ վիճակից ելնելով և այդ պահին համապատասխանում է Սահմանադրությանը, սակայն ուժի մեջ մտնելու ժամանակ սոցիալական կյանքի փոփոխությունների հետևանքով դառնում է հակասահմանադրական: Դատարանը այս դեպքում, իհարկե, պետք է հին օրենքը մեկնաբանի նոր իմաստով, որպեսզի պահպանի դրա

սահմանադրականությունը: Մինչդեռ մեկնաբանման սահմանափակումները միշտ չէ, որ թույլատրում են դա անել: Եթե նույնիսկ, դատարանը լիազորված չէ հին օրենքին նոր իմաստ տալու, եթե այդ դեպքում շեղվում է մեկնաբանման կանոնների համակարգից, ապա իրավասու դատարանը հիմքերի առկայության դեպքում կարող է հին օրենքը ճանաչել հակասահմանադրական: Օրինակ՝ 1986 թ. ԱՄՆ Գերագույն դատարանը որոշել է, որ չափահաս անձանց միջև կամավոր համասեռամոլության քրեականացումը սահմանադրական է¹⁴: Տասներկու տարի անց ԱՄՆ Գերագույն դատարանը վերանայել է իր նախկին մոտեցումը և սահմանել, որ Սահմանադրությունն արգելում է քրեականացնել չափահաս մարդկանց միջև կամավոր համասեռամոլությունը¹⁵: Փոփոխությունները տեղի են ունեցել ամերիկյան հասարակությունում, որն ընկալել էր միասեռ հարաբերությունների բնույթը և կարողացել նրանց նկատմամբ լինել հանդուրժող¹⁶:

Իրավունքը նոր իրողություններին համապատասխանեցնելու գործառույթն իրականացնելիս՝ դատարանը պետք է հաշվի առնի ևս մեկ հանգամանք: Սոցիալ-իրավական փոփոխությունների անհրաժեշտությունը դատարանին հաճախ կանգնեցնում է բարդ երկրնտրանքի առջև, քանի որ դրանք երբեմն վնասում են հասարակական անվտանգությանը և կայունությանը: Դատարանը պետք է կարողանա հավասարակշռել փոփոխությունն ու կայունությունը: Իրավունքը պետք է կայուն լինի, սակայն դա չի նշանակում, որ այն գտնվում է քարացած վիճակում: Կայունությունն առանց փոփոխության անդամալույծ է, իսկ փոփոխությունն առանց կայունության հանգեցնում է անիշխանության¹⁷: Դատարանի դերն է վերացնել հասարակության կարիքների և իրավունքի միջև անջրպետը՝ թույլ չտալով, որ իրավական համակարգը հայտնվի անդամալույծի վիճակում կամ էլ անկում ապրի դեպի անիշխանություն: Դատարանը պետք է զուգակցի կայունությունը փոփոխության, իսկ փոփոխությունը կայունության հետ:

Մինչև դատավորի կողմից սոցիալ-իրավական արժեքների ներմուծման կամ արդիականացման վերաբերյալ խնդիրներին անդրադառնալը նախ պետք է նշել սոցիալ-իրավական արժեքների պատմական բովանդակության և դրանց փոփոխման, արժեքների համակարգի և գործառույթների հետ կապված որոշ հարցեր:

Արժեքային համակարգը ներկայացնելիս պետք է հիմք ընդունել կոնկրետ հասարակության իրավական, քաղաքական մշակույթների, կրոնական ուղղվածության առանձնահատկությունները: Օրինակ՝ արևմտյան իրավական մշակույթի հիմնարար արժեքներից են անձը, պատիվը, կարգ ու կանոնը, հասարակական պարտքը: Արևմտյան տիպի հասարակական և իրավական կյանքը բնութագրվում է անձնային ակունքների առաջնայնությամբ¹⁸: Արևմտաեվրոպական հասարակությունում գերակայում է ռացիոնալությունը և քաղաքականացվածությունը, որի պայմաններում ազատության գաղափարը, քաղաքացիական հասարակությունը, օրենքը և մարդու

¹⁴ Տե՛ս **Bowers v. Hardwick**, 478 U. S. 186 (1986), էջ 68:

¹⁵ Տե՛ս **Lawrence v. Texas**, 123 S. Ct. 2472 (2003), էջ 111:

¹⁶ Տե՛ս **Robert Post**, Foreword: Fashioning the Legal Constitution: Culture, Courts, and Law, 117 Harv. L. Rev. 4, 2003, էջ 29:

¹⁷ Տե՛ս **Barak Aharon**, նշվ. աշխ., էջ 16:

¹⁸ Տե՛ս **Балаянц М. С.** Фундаментальные правовые ценности современного общества. Автореф. дисс. канд. юрид. наук. М., 2007, էջ 27:

բնական իրավունքները ձեռք են բերում համակարգաձևավորող արժեքի նշանակություն¹⁹:

Կոնկրետ հասարակությունում առկա արժեքային համակարգից բացի՝ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, իրավագիտության և քաղաքագիտության շրջանակներում մշտապես քննարկվել է համամարդկային արժեքների որոշակի համակարգի հարցը: Համամարդկային արժեքների թվին են դասվում արդարությունը, ազատությունը, հավասարությունը, ժողովրդավարությունը, կոլեկտիվիզմը և այլն: Համամարդկային համարվող սոցիալական արժեքների և տեղային հասարակական արժեքների միջև հաճախ ծագում են հակասություններ, որոնց պայմաններում իրավական քաղաքականության սուբյեկտները, այդ թվում՝ դատական իշխանության մարմինները, պետք է որոշեն նման արժեքների գերակայության հարցը:

Սոցիալական արժեքների մի մեծ զանգված, ստանալով նորմատիվ ճանաչում, ձեռք է բերում իրավական արժեքի նշանակություն: Իրավական արժեքները նորմատիվ առումով կարելի է մեկնաբանել որպես իրավական կյանքի կառուցվածքի յուրահատուկ տարր, իրավագիտակցության և իրավական վարքագծի միջուկ: Իրավական արժեքներն ապահովում են իրավական համակարգի միասնականությունը, կատարում են համակարգաձևավորող գործոնի դեր:

Կարծում ենք՝ իրավական արժեքների օբյեկտիվացման, պաշտպանության գործընթացում կարևորվում է դատավորի դերակատարությունը, որը դատական իշխանության իրականացման ժամանակ այսպես թե այնպես նպաստում է սոցիալական արժեքների իրավականացմանն ու արդիականացմանը: Դատական իշխանության մարմինները, բացի հասարակական հարաբերությունների կառավարման և պետական ապարատի ու քաղաքացու միջև առկա անհավասարությունը հարթելու գործառնությից, իրականացնում են նաև համամարդկային արժեքների պաշտպանություն²⁰:

Դատարանը հանրային մարմին է և մշտապես արտացոլում է զանգվածային գիտակցությունը: Ինչպիսին հասարակական գիտակցությունն է, իրավական մշակույթը, այնպիսին է նաև դատարանը²¹: Դատավորը՝ որպես սոցիալական էակ, օժտված է որոշակի արժեքային համակարգով և իրավական վեճի լուծման, օրենքների մեկնաբանման, իրավական նորմերի կիրառման գործընթացը դիտարկում է որոշակի արժեքների տեսանկյունից ու դրա հիման վրա որոշում տվյալ վեճում գերակայող արժեքը: Ռ. Փառնդը նշում է, որ դատավորի համար կարևոր է ունենալ արժեքների սանդղակ, որի միջոցով կգնահատվեն հակամարտող շահերը և որոշում կկայացվի գերակայող արժեքի օգտին²²: Այս առումով դատական իշխանության իրականացման և վեճերի լուծման գործընթացում հասարա-

¹⁹ Տե՛ս **Малахов В. П.** Философия права. Учебное пособие. М., 2002, էջ 405-409, **Пшидаток В. Е.** Трансформация правосознания и правовых ценностей в условиях становления демократии и гражданского общества в современной России. Автореф. дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2007, էջ 9:

²⁰ Տե՛ս **Джаримова А. И.** Судебная власть как предмет социальной философии. Автореф. дисс. канд. филос. наук. Краснодар, 2007, էջ 9:

²¹ Տե՛ս **Романова И. Е.** Имидж судебной власти как ценность демократической культуры. Автореф. дисс. канд. философ. наук. Тюмень, 2006, էջ 5:

²² Տե՛ս **Куликов А. К.** Категория интереса в социологической юриспруденции Роско Паунда. // "Правоведение", 1977. № 6, էջ 89-96:

կությունում առկա սոցիալական արժեքների համակարգը և դատավորի կողմից այդ արժեքների հիերարխիայի ընկալումն ունեն կարևոր նշանակություն:

Կոնկրետ իրավական համակարգի շրջանակում գործող դատավորը հիմնարար արժեքների մի ողջ համակարգ ունի: Դատավորը, որը գործում է ճանաչված արժեքների համակարգում, կարող է հանդիպել համակարգի արժեքների ընտրության հետ կապված բարդ հարցերի: Հաճախ որոշակի արժեքների ընկալման վերացական - փիլիսոփայական և իրավական մոտեցումների միջև առաջանում են բախումներ: Օրինակ՝ մի կողմից իրավունքի փիլիսոփայության մեջ հռչակվում է մարդու իրավունքների անօտարելի լինելը, մյուս կողմից սահմանադրական ամրագրում է ստացել օրենքով նախատեսված դեպքերում մարդու առանձին իրավունքների սահմանափակման հնարավորությունը: Այսպես, կյանքը, ազատությունը և սեփականությունը հռչակվում էին որպես սրբազան, անօտարելի արժեքներ, սակայն պարզվեց, որ իրավական նորմերի հիման վրա դրանք կարելի է նաև օտարել: Այս հակասությունները քիչ տեսանելի էին երկու-երեք դար առաջ, երբ հանուն ժողովրդի իշխանության՝ պայքար էր մղվում թագավորական բացարձակ իշխանության դեմ, իսկ հասարակական կյանքի մի շարք ոլորտներ օրենքով մանրամասն կարգավորված չէին: Ներկայումս իրավիճակն այլ է. ընդհանուր սկզբունքների և կոնկրետ իրավական նորմերի անհամապատասխանությունը դառնում է ակնհայտ²³:

Դատավորը իր գործառույթներն իրականացնելիս կարող է հանդիպել մրցող արժեքների, որի ժամանակ անհրաժեշտություն է առաջանում դրանց միջև հավասարակշռություն հաստատել: Այս կապակցությամբ Ա. Բարակը գտնում է, որ դատավորի առջև կանգնած խնդիրն անհրաժեշտ է լուծել ողջամիտ կերպով, ինչը նշանակում է, որ լուծումը պետք է համապատասխանի հասարակական համակարգի գոյություն ունեցող կառուցվածքին: Դատավորը պետք է կատարի այնպիսի ընտրություն, որը կպահպանի համակարգի ներդաշնակությունը: Այսպես, եթե դատավորը որոշի, որ հավասարության սկզբունքն ավելի կարևոր է, քան հանրային պաշտոնատար անձի պաշտպանությունը (անձեռնմխելիությունը) հանրային ծառայության իրականացման ընթացքում իր պատճառած գույքային վնասի համար նախատեսված պատասխանատվությունից, ապա համաձայնեցված մոտեցումը դատարանից պահանջում է նույն դիրքորոշումն արտահայտել նաև քրեական իրավունքում անձեռնմխելիության հարցերը մեկնաբանելիս: Մրցակցող արժեքների միջև հավասարակշռման անհրաժեշտությունը ծագում է իրավունքի տարբեր ոլորտներում: Եթե դատավորը հանդիպում է հավասարակշռման խնդրի, նա պետք է պարզի, թե արժեքների ինչպիսի հավասարակշռություն է ձեռք բերվել նմանատիպ գործերով²⁴:

Առավել վիճելի է մնում այն հարցը, թե արդյոք դատավորը իրավասու է գոյություն ունեցող արժեքային համակարգ ներմուծել նոր արժեքներ: Եթե ղեկավարվենք Կելզենի կողմից մշակած պոզիտիվիստական տեսությամբ, ապա այս դեպքում իրավունքը օրենքի ուժ ունեցող այն ակտն է, ո-

²³ Տե՛ս **Чиркин В. Е.** Общечеловеческие ценности, философия права и позитивное право.// "Право и политика", № 8, 2000, էջ 5:

²⁴ Տե՛ս **Барак А.** Судейское усмотрение. М., 1999, էջ 315:

րը կախված չէ սոցիալական արժեքներից քանզի վերջիններս չեն համարվում իրավունքի աղբյուր: Օրենսդրի խնդիրն է նորմատիվ ակտում ընդգրկել սոցիալական արժեքներ, որոնք կդառնան իրավական գաղափարներ: Այդ գործողությունների հետևանքով արժեքները կորցնում են իրենց սոցիալական բնույթը և ձեռք են բերում իրավական նշանակություն²⁵: Պոզիտիվիստական իրավաբանական դեպքում սոցիալական արժեքների իրավականացման մենաշնորհը կարծես վերապահվում է օրենսդիր իշխանությանը, իսկ դատարանը այս գործընթացում որևէ էական դերակատարություն չունի:

Կարծում ենք, առավել ընդունելի է այն մոտեցումը, համաձայն որի՝ դատավորը կան պարտավոր է բացահայտել այն արժեքները, որոնք գոյություն ունեն այդ համակարգում, կան էլ ուշադրություն դարձնել այնպիսի արժեքների, որոնք դեռևս չեն ներմուծվել այդ համակարգ: Մի շարք արժեքներ գտնվում են հասարակական համակարգի ներսում, այդ պատճառով դատավորը պետք է դիտարկի այդ համակարգը, որպեսզի կարողանա բացահայտել դրա արժեքները: Այս գործը բարդություն չի ներկայացնում հատկապես այն դեպքերում, երբ այդ արժեքներն ամրագրված են Սահմանադրությունում կամ օրենքներում²⁶:

Գերմանիայի Սահմանադրական դատարանը 1958 թ. որոշմամբ ամրագրել է սոցիալական արժեքների վերհանման հայեցակարգը, որի համաձայն՝ Սահմանադրությունն ամրագրում է արժեքների օբյեկտիվ հիերարխիկ համակարգ, որոնք պետք է իրացվեն Սահմանադրության կիրառման հետ միասին: Սահմանադրությունը համարվում է այդ արժեքների դիմամիկ արտահայտությունը: Դա նշանակում է, որ գոյություն ունեն արժեքներ, որոնք Սահմանադրությունից դուրս են, բայց սահմանադրաիրավական հարցերի լուծման համար ունեն անմիջական նշանակություն:

Դատավորը իրավասու է սահմանադրական տեքստից վեր հանել այնպիսի արժեքներ, որոնք թեև ուղղակի ամրագրված չեն Սահմանադրության մեջ, սակայն բխում են տվյալ հասարակության սահմանադրական գաղափարախոսությունից: Նման մոտեցումն արտահայտելիս հաշվի է առնվում ոչ միայն սահմանադրությամբ հասարակական հարաբերությունների ընդհանրական կարգավորումը, այլ նաև որոշ համամարդկային արժեքների վերացարկման բարձր աստիճանի վրա ձևակերպված սկզբունքների սահմանադրական ամրագրումը: Բնական է, որ դրանք վերացական են, իսկ որոշ դեպքերում՝ նաև հռչակագրային: Լինելով փիլիսոփայական, սոցիոլոգիական, գաղափարախոսական դրույթներ՝ դրանք շատ հաճախ չեն տեղավորվում իրավական նորմերի խիստ լեզվական ձևակերպման շրջանակներում, և որպեսզի դրանց կիրառումը հնարավոր լինի ապահովել իրավաբանական միջոցներով, կարիք կա դրանք լրացուցիչ մեկնաբանելու և զարգացնելու: Նման իրավիճակներում դատարանը կարող է

²⁵ Տե՛ս **Шайо А.** Конституционные ценности в теории и судебной практике. // "Сравнительное конституционное обозрение", 2008, № 4, էջ 4 – 6:

²⁶ Այս մասին մանրամասն տե՛ս **Бондарь Н.** Конституционные ценности в практике Конституционного Суда России: опыт разрешения социальных противоречий и конфликтов. М., 2004, էջ 65-91, **Рогов И.** Фундаментальные конституционные ценности как основа государственности суверенного Казахстана, Астана, 2008, էջ 91-96, **Скудра В.** Защита конституционных ценностей Конституционным Судом Республики Латвия. Рига, 2007, էջ 148-154:

վեր հանել այնպիսի արժեքներ, որոնք ունեն սահմանադրական հիմնավորում: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 09.04.2007 թվականի որոշմամբ նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը (2006 թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ)՝ տասնօրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Սահմանադրական դատարանը նշված գործով որոշել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար նաև արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին: Ինչպես նկատում ենք, ՀՀ Սահմանադրական դատարանը սահմանադրական տեքստից վեր է հանել ՀՀ Սահմանադրությունում ուղղակիորեն ամրագրում չստացած դատական ակտերի պատճառաբանության մասին սահմանադրական արժեքը: ՀՀ Սահմանադրական դատարանը այս առումով կարող է դիտարկվել որպես արժեհամակարգ ձևավորող մարմին:

Ա. Շայոն, մերժելով դատարանի՝ սահմանադրական արժեքներ վեր հանելու իրավասությունը, նշում է, որ եթե դատավորը արտոնություն ունի կարողալու անտեսանելի սահմանադրություն, ապա առկա է վտանգ, որ այդ որոշումը հասարակության համար կմնա անհասկանալի: Արդյունքում կձևավորվի որոշակի արիստոկրատական մեծամտություն, որը կարող է վերածվել կամայականության²⁷: Հեղինակի մոտեցումն ընդունելի չէ, քանի որ, օրինակ, ՀՀ Սահմանադրական դատարանը, իր սահմանադրաիրավական կարգավիճակով պայմանավորված, կոչված է նպաստելու սահմանադրական կարգավորման զարգացմանը: Բանն այն է, որ պետական իշխանության յուրաքանչյուր թեև իր իրավասության սահմաններում վեր է հանում, հստակեցնում և կոնկրետացնում է ՀՀ Սահմանադրությամբ ուղղակի ամրագրում չստացած արժեքներ: Այսպես, Ազգային ժողովը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության գաղափարը, սահմանադրական տեքստից վեր է հանել «կամայականության արգելքի» սահմանադրական արժեքը և այն որպես սկզբունք ամրագրել «Վարչական վարույթի և վարչարարության հիմունքների» մասին ՀՀ օրենքում: Նման պայմաններում որևէ իրավական և տրա-

²⁷ Տե՛ս IIIaño A., նշվ. աշխ., էջ 4–6:

մաքանական հիմք չկա պնդելու, որ մասնագիտացված սահմանադրական վերահսկողության դատական մարմինը, օրինակ, իրավասու չէ կամայականության արգելքի դրույթը սահմանադրական տեքստից հանելու և ամրագրելու պետական գործունեության մեկ այլ ոլորտում:

Բացի այդ, դատավորը երբեմն իրավասու է, իր երկրի իրավական համակարգի շրջանակներից դուրս գալով, ներմուծելու այնպիսի հիմնարար արժեքներ, որոնք բացակայում են այդ իրավական համակարգում: Դա թույլատրելի է, քանի որ հիմնարար արժեքների ցանկը փակ չէ, և դատավորը կարող է իր իրավական համակարգը հարստացնել այնպիսի արժեքներով, որոնք դեռևս չեն ստացել ներպետական դատական ճանաչում: Տվյալ պետության սոցիալական համակարգին անծանոթ արժեքների ներմուծման անհրաժեշտությունը պետք է հիմնավորել որոշ օբյեկտիվ փաստարկումներով, օրինակ՝ նման արժեքների ներմուծումը իրավաչափ կհամարվի, եթե դրանք ճանաչվել են միջազգային իրավական համակարգում կամ իրավական հարուստ ավանդույթներ ունեցող այլ պետություններում ձևավորված կայուն իրավական պրակտիկայում: Բոլոր դեպքերում, դատավորը իրավունք չունի անտեսելու նոր արժեքները միայն այն հիմքով, որ դրանք նոր են և դեռևս ճանաչում չեն ստացել:

Ասվածը, իհարկե, չի նշանակում, որ դատավորը սոցիալական արժեքների ներմուծման հարցում կարող է գործել ազատ հայեցողությամբ: Հստակ է, որ դատավորը իրավունք չունի ներմուծել այնպիսի հիմնարար արժեքներ, որոնք պարզապես իրեն դուր են գալիս: Այսպես, եթե իրավական համակարգը հիմնված է սեռերի հավասարության արժեքի վրա, ապա դատավորը, որը նույնիսկ չի ընդունում սեռերի հավասարությունը, իրավունք չունի այդ համակարգ ներմուծել անհավասարության վրա հիմնված արժեքներ: Դատավորը իրավասու է ներմուծելու այնպիսի արժեքներ, որոնք համատեղելի են գոյություն ունեցող սահմանադրական արժեքներին կամ համարվում են դրանց բնական զարգացումը, կամ էլ պայմանավորված են իրավական համակարգերի մերձեցման, իրավունքի զարգացման գործընթացով: Նման դեպքերում դատավորը պետք է նկատի ունենա, որ իրավունքի զարգացումը իրավունքի համակարգի ներսում պարունակում է նորմատիվային կապեր: Այն պետք է արտացոլի իրավական համակարգի հիմնարար արժեքները և դիտարկվի համակարգային փոփոխարարություններում, ներկայացվի ներկառուցվածքային կապերի համատեքստում: Իրոք, դատավորը, որը նպաստում է իրավունքի զարգացմանը, չի կայացնում նորմատիվ համակարգից դուրս անհատական ակտ: Դատավորի գործողությունները պետք է տեղավորվեն այդ համակարգի սահմաններում, իսկ դատական ակտը պետք է ներդաշնակ լինի այդ համակարգին: Այդ պատճառով դատավորը պետք է համոզված լինի, որ փոփոխությունները ներդաշնակ են, իսկ զարգացումը՝ բնական: Ընդհանուր առմամբ փոփոխությունները պետք է կատարվեն զարգացման և ոչ թե հեղափոխական եղանակով:

Ա. Շայոն քննարկվող հարցադրումների կապակցությամբ արդարացիորեն նշում է, որ իրավագիտությունը և դատական պրակտիկան պետք է մշակեն այն տեսությունը, որը հնարավորություն կտա որոշ չափով հենվել գոյություն ունեցող սոցիալական արժեքների՝ որպես սոցիալական փաստերի վրա: Օրինակ՝ հասարակական կյանքում փոփոխվում, վերաիմաս-

տավորվում են ընտանիքը և նրա արժեքը: Ինչպե՞ս պետք է դատարանն ընկալի այդ փոփոխությունները, եթե հատկապես ընդունվող որոշումը վերաբերում է այնպիսի հասարակությանը, որի ընկալումը դեռևս չի փոխվել և երբեք չի համապատասխանի այլ պետություններում այդ հարցի վերաբերյալ առկա ու ձևավորված կայուն պրակտիկային: Ինչպե՞ս պետք է դատավորը տեղեկանա սոցիալական այս կամ այն արժեքների փոփոխության մասին, պե՞տք է արդյոք դատավորը դիմի հասարակական հարցումների, կամ պե՞տք է արդյոք մինչև այդ փոփոխությունները իրավաբանորեն ամրագրելը սպասի հասարակական կարծիքի համախմբմանը: Անհրաժեշտ է ունենալ իրավական մեթոդաբանություն, որը կարող է կիրառվել, երբ խոսքը իրավունքում նոր արժեքներ ներմուծելու մասին է, կամ երբ անհրաժեշտ է կյանք տալ սահմանադրության մեջ ներդրված արժեքներին²⁸: Արժեքների ներմուծման խնդիրներն առավել ակնառու են դառնում Եվրոպական դատարանի պրակտիկայում: Վերջինս մի կողմից պետք է պահպանի պետության «ազատ հայեցողության» դրույթը, մյուս կողմից որոշի, թե որ պահից կարող է օրինականացնել համաեվրոպական արժեքներով պայմանավորված որոշակի հայացքներ, որոնք առանց իրավական ճգնաժամ ստեղծելու կարող են ներմուծվել անդամ պետությունների իրավական համակարգեր:

Կարծում ենք, բարձրացված հարցադրումների տեսանկյունից անհրաժեշտ է տարբերակել, թե սոցիալական ինչպիսի արժեքների ներմուծման կամ արդիականացման մասին է խոսքը: Եթե հարցը վերաբերում է դատավորի կողմից իրենց բովանդակությամբ խիստ իրավաբանական արժեքների ներմուծմանը կամ արդիականացմանը (բովանդակության փոփոխման), ապա, թվում է, դատավորը օժտված է մասնագիտական ձեռնհասությամբ՝ որոշելու այդ արժեքների ներմուծման կամ բովանդակության փոփոխության իրավաչափությունը (օրինակ՝ իրավունքի գերակայության սկզբունքը իրավական նշանակություն ունեցող արժեք է, և դրա մեկնաբանման հարցում դատարանը օժտված է ձեռնհասությամբ): Եթե խոսքը այնպիսի արժեքների ներմուծման կամ արդիականացման մասին է, որոնք, լինելով սահմանադրական արժեքներ, ինքնին խիստ իրավաբանական չեն, այլ բաց են բոլորի համար (ամուսնություն, ընտանիք, մասնավոր կյանք, տնտեսական մրցակցություն), ապա դատավորը պետք է տիրապետի որոշակի գործիքների (տեղեկատվական, վերլուծական ինստիտուցիոնալ համակարգեր, գիտության այլ բնագավառի գիտելիքներ, մեթոդաբանություն), որ կարողանա որոշել այդ արժեքների ներմուծման կամ վերափոխման սոցիալ - իրավական նշանակությունը:

Ամփոփելով վերոգրյալը հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Փոփոխվող հասարակությունում դատարանը իրականացնում է իրավունքի հարմարեցման և սոցիալական արժեքների վերափնաստավորման կամ նոր սոցիալական արժեքների ներմուծման գործառույթներ, որտեղ առավելապես դրսևորվում է դատարանի գործունեության հասարակական-քաղաքական բնույթը:

2. Օրենսդիր և դատական մարմնների համագործակցության սահմանափակ գործընկերության մոդելի դեպքում փոփոխվող հասարակություն-

²⁸ Տե՛ս IIIaño A., նշվ. աշխ., էջ 5:

նուն իրավունքի հարմարեցման հիմնական պատասխանատուն օրենսդիր մարմինն է, իսկ դատավորը իրավասու է մեկնաբանման միջով օրենքը հարմարեցնելու նոր իրողություններին: Միևնույն ժամանակ, դատարանի կողմից իրավունքում կատարվող փոփոխությունները սահմանափակ են, հատվածային և ռեակտիվ:

3. Դատավորը՝ որպես արժեհամակարգ ձևավորող սուբյեկտ, իրավասու է սահմանադրական տեքստից վեր հանելու այնպիսի արժեքներ, որոնք թեև ուղղակի անրագրված չեն Սահմանադրության մեջ, սակայն այդ արժեքները բխում են տվյալ հասարակության սահմանադրական գաղափարախոսությունից: Ավելին, դատավորը երբեմն իրավասու է, դուրս գալով իր երկրի իրավական համակարգի շրջանակներից, ներմուծելու այնպիսի հիմնարար արժեքներ, որոնք բացակայում են տվյալ երկրի իրավական համակարգում, սակայն ճանաչված են միջազգային իրավական համակարգում կամ իրավական հարուստ ավանդույթներ ունեցող այլ պետություններում ձևավորված կայուն իրավական պրակտիկայում:

АРТУР ГАМБАРЯН – К вопросу о функциях суда в изменяющемся обществе. – В условиях изменения общественной жизни и социальных ценностей органы государственной власти обязаны привести правовое регулирование в соответствие с новым общественным укладом. В противном случае эффективность действия права нарушается. Адаптация права может осуществляться двумя способами: 1) посредством отражения общественных изменений в законодательных изменениях; 2) посредством нового толкования закона.

Вполне приемлема модель ограниченного сотрудничества между органами законодательной и судебной власти, где основную ответственность по адаптации права несет законодатель, а судья уполномочен приспособлять закон к новым условиям посредством его толкования. Иными словами, основная ответственность ложится на законодательный орган, а роль суда является второстепенной. Устраняя имеющийся водораздел между правом и обществом, суд должен принимать во внимание институциональные границы своей деятельности. Споры, требующие его вмешательства, отбираются не им, а другими субъектами права, которые и решают, какие именно споры следует передать на рассмотрение суда. Могут пройти годы, прежде чем проблема приобретёт публичное значение и станет предметом судебного рассмотрения. Судебная правотворческая деятельность производна от процесса разрешения споров. Таким образом, без судебного спора нет и судебного правотворчества. В этом смысле суд способствует развитию права не перманентно, а время от времени. Осмысляя социальные ценности, судья правомочен выделить среди них такие, которые, возможно, и не закреплены в конституции напрямую, однако вытекают из идеологии данного общества. Более того, судья правомочен, выходя порой за пределы правовой системы своей страны, привносить в неё такие основополагающие ценности, которые признаны международной системой права или сформированы устойчивой правоприменительной практикой государств, имеющих богатые правовые традиции.

Из этого вовсе не следует, что, привнося социальные ценности в правовую систему страны, судья волен действовать по своему усмотрению. Ценности, привносимые им, должны быть совместимы с теми, которые закреплены в конститу-

ции, или являются их естественным развитием, или обусловлены конвергенцией правовых систем.

ARTUR GHAMBARYAN – *On the issue of court's functions in a changing society*. – The present paper considers the Court's functions of localizing the law and inserting social values in a society undergoing changes. While social life and social values are changing, the public authority institutions shall, within the framework of the power separation principle, adjust legal regulation in compliance with new social conditions. Otherwise, certain gap will occur between law and life that may undermine the effectiveness of law. The author of the paper notices that law localization in the society undergoing changes may be implemented either through making legislative changes by the legislative body, or through novel interpretation of the law.

The author believes the model of limited cooperation between legislative and judicial bodies to be acceptable for law localization in the society undergoing changes. In this model, the legislative body would be the main responsible for law localization, while the judicial body would be authorized to adapt the law to the new conditions through interpretation. In other words, the legislative body would be the main body in charge of eliminating the gap between the social environment and the law. The Court has a secondary role in this process.

When considering the gap between the law and the society, the Court shall act within the institutional limits of its operation. The Court may not plan the strategy for eliminating the gap between the law and society, because disputes subject to judicial resolution are selected not by the Court, but by other subjects of law that decide which disputes shall be submitted to the review of the Court. Years may pass on before the matter rises to a level of public importance and becomes a subject of judicial review. The judicial legislative function is adjunct to its main function of dispute resolution; hence, no judicial legislative function can be carried out without a court dispute. In this sense, the Court contribution to the development of the law is occasional, but not cyclic.

When analyzing the Court's functions in incorporation and reconsideration of social values, it can be concluded that a judge, as a subject impacting the system of values, is entitled to extract from the constitutional text such values which while not being directly stipulated in the Constitution, are implied within the constitutional ideology of the given society. Moreover, the judge is sometimes entitled, going beyond the legal system of its state, to incorporate fundamental values, which although not existent in the legal system of the given state, are recognized in the international legal system or in the long established legal practice of other states that have rich legal traditions.

The author notes, however, that the aforementioned should not necessarily imply that a judge can act freely at its discretion. Certainly, a judge may not incorporate fundamental values which merely please him/her. Such values shall be consistent with the present constitutional values, be regarded as their natural development, or be conditioned by harmonization of legal systems or law development processes.